ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՔՈՉԱՐՅԱՆ ՆԱՐԵԿ ՄԱՄԻԿՈՆԻ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ (ՄԱՐԴՈՒ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ)

ԺԲ.00.02 մասնագիտությամբ - «Հանրային իրավունք – սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2014

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

КОЧАРЯН НАРЕК МАМИКОНОВИЧ

КОНСТИТУЦИОННО-ПРАВОВЫЕ ГАРАНТИИ ПО ОБЕСПЕЧЕНИИ И ЗАЩИТЕ ПРАВ ЧЕЛОВЕКА В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ (В КОНТЕКСТЕ ОСУЩЕСТВЛЕНИЯ ПРАВА ЧЕЛОВЕКА НА КОНСТИТУЦИОННОЕ ПРАВОСУДИЕ)

АВТОРЕФЕРАТ

Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.02 – “Публичное право – конституционное, административное, финансовое, муниципальное, экологическое, европейское право, государственное управление”

ЕРЕВАН-2014

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի «Գլաձոր» համալսարանում

Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ. Գ. Հարությունյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ն. Ա. Այվազյան

իրավաբանական գիտությունների թեկնածու Վ. Վ. Ռաֆայելյան

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիա

Ատենախոսության պաշտպանությունը տեղի է ունենալու 2014 թ. մարտի 14-ին, ժամը 13^{00}-ին Երևանի պետական համալսարանում գործող ԲՈՀ-ի իրավաբանության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2014 թ. փետրվարի 12-ին:

Մասնագիտական խորհրդի գիտ. քարտուղար,
իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Վ.Դ. Ավետիսյան

Тема диссертации утверждена в Ереванском университете “Гладзор”

Научный руководитель: доктор юридических наук, профессор Г. Г. Арутюнян

Официальные оппоненты: доктор юридических наук, профессор Н. А. Айвазян

кандидат юридических наук В. В. Рафаелян

Ведущая организация: Академия Государственного Управления РА

Защита состоится 14 марта 2014 г., в 13^{00} часов на заседании специализированного совета 001 по юриспруденции ВАК при Ереванском государственном университете (0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки ЕГУ.

Автореферат разослан 12 февраля 2014 г.

Ученный секретарь специализированного совета,
кандидат юридических наук, доцент В.Д. Аветисян

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Մարդկության կողմից ողջ պատմական զարգացման ընթացքում ձեռք բերված և իմաստավորված բոլոր ոչ նյութական արժեքների համակարգում մարդու իրավունքները՝ որպես համընդհանուր և համամարդկային արժեքներ, գրավում են առաջնային տեղ [1] : Մարդու իրավունքների գաղափարական հենքը հումանիզմն է, որն իրենից ներկայացնում է այնպիսի տեսա-փիլիսոփայական, աշխարհայացքային համընդգրկուն պատկերացումների համակարգ, որում կենտրոնական տեղ է գրավում մարդն՝ իր անօտարելի բնական իրավունքներով և ազատություններով՝ որպես բոլոր դարաշրջանների համար անժխտելի բարձրագույն արժեք: Մարդկությունն անցել է երկար և դժվարին պատմական ուղի, մինչև որ «մարդն է բոլոր իրերի չափանիշը» հին հունական այս կենսափիլիսոփայությունը դարձել է հասարակական կյանքում մարդու դերի վերահմաստավորման հիմնարար սկզբունք:

Մարդու իրավունքների հայեցակարգի ձևավորման գաղափարական մեկնարկը տրվեց դեռևս նախաքրիստոնեական ժամանակաշրջանում, այնուհետև մարդկության առաջադեմ մտածողների կողմից վերահմաստավորվելով և սերնդե-սերունդ փոխանցվելով արդեն 17-րդ դարում ձեռք բերեց համակարգված բնույթ և համընդհանուր ճանաչում՝ ամրագրվելով միջազգային և ներպետական իրավական մի շարք հիմնարար փաստաթղթերում՝ որպես բարձրագույն և անօտարելի արժեք, անմիջական գործող իրավունք: Սակայն ժամանակի քննության ընթացքում անհերքելի դարձավ այն փաստը, որ մարդու իրավունքների լիարժեք իրացման համար բավարար չեն միայն այդ իրավունքների ճանաչումը և սահմանադրորեն ամրագրումը, այլև անհրաժեշտ է, որ այդ իրավունքներն ունենան նաև արդյունավետ պաշտպանության մեխանիզմներ, քանզի հենց մարդու իրավունքների և ազատությունների մեջ են ամփոփված մարդկության կողմից ճանաչված և իմաստավորված հումանիստական արժեքների ողջ ներուժը, և դրանց լիարժեք կենսագործմամբ և երաշխավորված պաշտպանությամբ է միայն հնարավոր ապահովել քաղաքակրթության արժեքների հենքի վրա ձևավորված պետա-իրավական համակարգի կայուն և դինամիկ զարգացում՝ բացառելով ոչ հումանիստական արժեքների վերարտադրման բոլոր հնարավորությունները: Այս իրողության համընդհանուր գիտակցումն էլ հիմք հանդիսացավ, որ ինչպես միջազգային, այնպես էլ ներպետական իրավական համակարգերում առավելապես կարևորվեն մարդու իրավունքների ապահովման ու պաշտպանության, իրավունքի գերակայության երաշխավորման հիմնախնդիրները:

---

[1] Տե՛ս Конституционные права и свободы человека и гражданина в Российской Федерации. под.ред. О. И. Тиунова, М., 2005. էջեր 2-5, 32-43:

Ներկայումս իրավունքի գերակայության սկզբունքի՝ որպես մարդու իրավունքների ապահովման և պաշտպանության հիմնարար իրավական միջոցի երաշխավորման կենսական անհրաժեշտությունը զգացվում է ինչպես միջազգային, այնպես էլ ներպետական իրավական համակարգերում: Դժվար է հիշատակել համամարդկային արժեքների պահպանմանն ու զարգացմանն ուղղված որևէ իրավական փաստաթուղթ, որտեղ առանձնակի կարևորությամբ չընդգծվի իրավունքի գերակայության սկզբունքի՝ որպես աշխարհում խաղաղության հաստատման, մարդու իրավունքների ապահովման և պաշտպանության, մարդկության արժանապատիվ գոյության շարունակականությանը սպառնացող վտանգների և չարիքների կանխարգելման ու վերացման միակ հիմնարար իրավական միջոցի դերը և դրա երաշխավորման անառարկելի անհրաժեշտությունը[2]:

Սակայն ընդգծելով իրավունքի գերակայության սկզբունքի երաշխավորման անհրաժեշտությունը, միջազգային իրավական համակարգերում միաժամանակ կարևորվում են սահմանադրական վերահսկողություն իրականացնող մասնագիտացված մարմինների գործունեության արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները, քանզի վերջիններս մարդու սահմանադրական արդարադատության իրավունքի լիարժեք իրացմամբ ի զորու են ոչ միայն ապահովելու Սահմանադրության գերակայությունն ու անմիջական գործողությունը, այլև մարդու իրավունքների ապահովմամբ ու երաշխավորված պաշտպանությամբ հասնելու իրավունքի գերակայության երաշխավորմանը: Հիշատակված իրողություններն էլ հիմք են հանդիսացել մեր կողմից թեմայի ընտրությունը կատարելու և հիշատակված հիմնահարցերի վերաբերյալ իրավավերլուծական բնույթի ընդհանրացումներ անելու համար: Եթե այս ամենին հավելենք նաև այն հանգամանքը, որ ներպետական իրավական համակարգում դեռևս լիարժեք հաղթահարված չեն իրավունքի գերակայության սկզբունքի միասնական ընկալման և համարաժեք իրավակիրառական պրակտիկայի ձևավորման հիմնախնդիրները, իսկ սահմանադրական արդարադատություն իրականացնող մասնագիտացված մարմինների միջոցով մարդու իրավունքների ապահովման և պաշտպանության հիմնահարցերը բավարար չափով ուսումնասիրված չեն և առկա են մի շարք հիմնախնդիրներ, որոնք հրատապ լուծման անհրաժեշտություն են առաջադրում, ապա առավել ակնհայտ է դառնում ընտրված թեմայի արդիականությունը և համակողմանի ուսումնասիրության անհրաժեշտությունը:

Թեմայի գիտական հետազոտության աստիճանը: Պայմանավորված այն հանգամանքով, որ ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ հետխորհրդային գրեթե բոլոր պետություններում իրավունքի գերակայության երաշխավորման և սահմանադրական վերահսկողություն իրականացնող մասնագիտացված մարմինների միջոցով մարդու իրավունքների ապահովման

[2] Տե՛ս Декларация Совещания на высоком уровне Генеральной Ассамблеио верховенстве права на национальном и международном уровнях//ООН, 67 сессия, 19 сентябрь. 2012г.

և պաշտպանության հիմնահարցերը գիտական քննարկման առարկա են հանդիսացել միայն Խորհրդային միության փլուզումից հետո, հիշատակված հիմնահարցերի վերաբերյալ նոր ու համընդգրկուն գիտական վերլուծությունների անհրաժեշտությունն էլ ավելի է մեծանում:

Ատենախոսության համար տեսական հիմք են հանդիսացել արտասահմանյան և հայրենական մի շարք հեղինակների՝ մասնավորապես Ի. Ա. Ալեքսանդրովայի, Ն. Ա. Այվազյանի, Ս. Ա. Ավագյանի, Մ. Վ. Բագլայի, Ս. Վ. Բոբոտովի, Ս. Վ. Բոշնոյի, Ա. Հ. Երիցյանի, Վ. Վ. Լազարևի, Ե. Ա. Լուկաշևայի, Վ. Օ. Լուչինի, Տ. Խաբրիևայի, Գ. Գ. Հարությունյանի, Վ. Վ. Մակլակովի, Ա. Մավչիչի, Մ. Ն. Մարչենկոյի, Մ. Ա. Միտյուկովայի, Դ. Ն. Միրոնովայի, Յու. Ա. Յուդինի, Վ. Ս. Ներսեսյանցի, Հ. Շվարցի, Վ. Ե. Չիրկինի, Ն. Վ. Վիտրուկի, Օ. Ի. Տիունովայի և այլոց աշխատությունները: Աշխատանքում համակողմանի վերլուծվել են նաև «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» Եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) 2010 և 2012 թվականների ընթացքում գումարված լիագումար նիստերի ընթացքում ընդունված փաստաթղթերը, որոնցում բացահայտվում են իրավունքի գերակայության երաշխավորման և մարդու սահմանադրական արդարադատության իրավունքի ապահովման հիմնախնդիրները և զարգացման հիմնական միտումները:

Ատենախոսության նորմատիվ իրավական հիմք են հանդիսացել ինչպես ՀՀ, այնպես էլ արտասահմանյան մի շարք պետությունների սահմանադրությունները, սահմանադրական դատարանի մասին օրենքները, սահմանադրական դատարանների որոշումները և այլ նորմատիվ իրավական ակտեր, որոնց վերլուծության և համադրության արդյունքում բացահայտվել են քննության առարկա հիմնահարցերի վերաբերյալ առկա լավագույն լուծումները:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Ատենախոսության հետազոտության օբյեկտ են հանդիսանում սահմանադրաիրավական այն հարաբերությունները, որոնք ձևավորվում են իրավունքի գերակայության երաշխավորման, սահմանադրական արդարադատության համակարգում մարդու իրավունքների ապահովման ու պաշտպանության, մարդու սահմանադրական արդարադատության իրավունքի լիարժեք իրացման հարցերում: Հետազոտության առարկա են հանդիսանում բոլոր այն սահմանադրաիրավական և օրենսդրական նորմերը, որոնք կոչված են սահմանելու, փոփոխելու կամ դադարեցնելու վերը նշված իրավահարաբերությունները:

Ատենախոսության մեթոդաբանական հիմքերը: Աշխատությունում համամասնորեն կիրառվել են ինչպես ընդհանուր գիտական (համակարգային վերլուծության, վերլուծության և համադրության, ինդուկցիայի և դեդուկցիայի և այլն), այնպես էլ հատուկ գիտական մեթոդներ: Մասնավորապես, աշխատության մեթոդաբանության առանցքն է հանդիսացել քննարկման առարկա իրավական երևույթների իմացաբանական, դրանց ձևավորման ու

պատմական զարգացման ընդհանուր օրինաչափությունների վերլուծության դիալեկտիկական մեթոդը, որը զուգակցվել է այնպիսի մասնավոր մեթոդների հետ, ինչպիսիք են համեմատական-իրավական (տարբեր պետություններում ձևավորված պրակտիկան համեմատելիս) և ձևական-իրավական (քննարկման առարկա հասկացությունները սահմանելիս) մեթոդները:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության նպատակն է սահմանադրական վերահսկողություն իրականացնող մասնագիտացված մարմինների գործունեության արդյունավետությունը բարձրացնելու, մարդու սահմանադրական արդարադատության իրավունքի լիարժեք երաշխավորման միջոցով հասնել Սահմանադրության գերակայության և կենսունակության ապահովմանը, մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանությանը և իրավունքի գերակայության երաշխավորմանը:

Ատենախոսության նպատակներին հասնելու համար առաջ են քաշվել հետևյալ խնդիրները.

- բացահայտել իրավունքի էությունը և իրավաընկալման սահմանները ժամանակակից իրավամտածողության շրջանակներում ու իրավակիրառական պրակտիկայում,
- իրավաընկալման ժամանակակից մոտեցումների հիման վրա բացահայտել իրավունքի գերակայության սկզբունքի հասկացությունը և դրա երաշխավորման արդի հրամայականները, որոնք իրենց համակցության մեջ ի զորու են երաշխավորելու իրավունքի գերակայությունը հանրային կյանքում,
- բացահայտել իրավունքի գերակայության երաշխավորման բոլոր այն նախադրյալները, որոնք իրենց համակցության մեջ ապահովում են իրավունքի գերակայության սկզբունքի ամբողջական իրացումը և դրանցից յուրաքանչյուրի բացակայությունը, անտեսումը կամ տարաբնույթ աղճատումները կարող են ի չիք դարձնել մյուսների գոյությունը ու վկայել իրավունքի գերակայության ձևախեղված դրսևորումների մասին,
- ուսումնասիրել և համակողմանի վերլուծել մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում սահմանադրական վերահսկողության միջազգային զարգացումների արդի միտումները,
- բացահայտել անհատական դիմումների համակարգի դրսևորման առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում և ներկայացնել այդ համակարգի զարգացման հիմնական ուղղությունները միջազգային զարգացումների արդի միտումներին ներդաշնակեցնելու վերաբերյալ առաջարկություններ,
- վերհանել ՀՀ-ում առկա բոլոր այն հիմնախնդիրները, որոնց արդյունավետ լուծման հրամայականներն ուղղված են մարդու սահմանադրական արդարադատության իրավունքի լիարժեք երաշխավորմանը,
- ուսումնասիրել պետական իշխանության մարմինների միջոցով մարդու սահմանադրական արդարադատության իրավունքի անուղղակի իրացման

բոլոր հնարավորությունները և ներկայացնել այդ հնարավորությունների արդյունավետ իրացման գործուն մեխանիզմներ:

Ատենախոսության գիտական նորույթը: Ատենախոսությունում համակարգային ամբողջականության մեջ վերլուծելով պատմական տարբեր ժամանակաշրջաններում իրավունքի ընկալման և դրսևորման առանձնահատկությունները, տրվել է «Իրավունքի գերակայության սկզբունք» եզրույթի սահմանում՝ բացահայտելով դրա անկապտելի հատկանիշները և երաշխավորման արդի հրամայականները: Ատենախոսությունը համակողմանի և ամբողջական գիտական հետազոտություն է՝ նվիրված ազգային իրավական համակարգում մարդու սահմանադրական արդարադատության իրավունքի երաշխավորմանը, այն ապահովող՝ անհատական սահմանադրական գանգատի ինստիտուտի սահմանադրաիրավական բնույթի ու բովանդակության բացահայտմանը, այդ համակարգի դրսևորման առանձնահատկություններին և միջազգային իրավական զարգացումների տրամաբանությամբ պայմանավորված՝ առկա հիմնախնդիրների արդյունավետ լուծման մոտեցումների առաջադրմանը:

Գիտական որոշակի նորույթ են բովանդակում նաև սահմանադրական և օրենսդրական նորմերի ուսումնասիրության արդյունքում մի շարք հարցերի վերաբերյալ փոփոխություններ կատարելու կոնկրետ առաջարկությունները:

Պաշտպանության են ներկայացվում հետևյալ հիմնական դրույթները՝

1. Վերլուծելով պատմականորեն ձևավորված հայեցակարգային մոտեցումները «իրավունք» հասկացության վերաբերյալ և բացահայտելով այդ հասկացության իրավաընկալման ու իրավակիրառման սահմաններն արդի իրավամտածողությունում, իրավունքն առավել ամբողջական բնորոշել ենք որպես հանրային կյանքում յուրաքանչյուր մարդու արժանապատիվ գոյության և լիարժեք ինքնադրսևորման անօտարելի, բնական հնարավորությունների համակցություն, որը ճանաչվում է բոլորի համար հավասարապես և սոցիալական հանրության այլ անդամների և պետության հետ փոխառնչություններում դրսևորվում ազատության ձևով՝ ապահովելով համընդհանուր արդարություն:
2. Իրավաընկալման նշված մոտեցումների հիման վրա իրավունքի գերակայության սկզբունքը դիտարկվել է որպես իրավական պետության հիմնարար սկզբունք, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների սահմանադրորեն ամրագրման, անարգել իրացման ու երաշխավորված պաշտպանության գլխավոր երաշխիք, որը սահմանափակելով պետական իշխանությունն իրավունքով, ապահովում է իրավունքի գերակա բնույթը հանրային կյանքի բոլոր ոլորտներում:
3. Իրավունքի գերակայության երաշխավորման տեսանկյունից չափազանց կարևոր է իրավունքի գերակայության սկզբունքի, ձևական հավասարության սկզբունքի և օրենքի գերակայության սկզբունքի հստակ տարանջատումը: Թվարկված երեք սկզբունքներն իրենց էությամբ և գործառույթներով

տարբեր բովանդակային ընդգրկում ունեցող սկզբունքներ են և կոչված են փոխլրացնելու միմյանց: Եթե իրավունքի գերակայության սկզբունքը ենթադրում է, որ օրինաստեղծ գործունեության ոլորտում օրենսդիր մարմինը պետք է օրենքում ամրագրի միայն բնական իրավունքի պահանջներին համապատասխանող նորմեր, իսկ օրենքի գերակայության սկզբունքը ենթադրում է, որ հասարակական հարաբերությունների իրավական կարգավորումը պետք է իրականացվի օրենսդիր մարմնի կողմից ընդունված իրավական օրենքով, ապա ձևական հավասարության սկզբունքը ենթադրում է, որ օրինաստեղծ գործընթացում իրավունքի էությունը ճիշտ ընկալելու և այն առանց աղճատումների օրենքներում ամրագրելու գործընթացում օրենսդիր մարմինը պետք է ղեկավարվի ձևական հավասարության սկզբունքով՝ ապահովելով համընդհանուր հավասար ազատություն և արդարություն:

4. Հաշվի առնելով, որ մարդու սահմանադրական իրավունքներն անմիջական գործող իրավունքներ են և պետությունը /կամ ժողովուրդն ու իշխանությունը/ սահմանափակված են այդ իրավունքներով, դրանց երաշխավորման, ապահովման ու պաշտպանության համար առանձնահատուկ կարևորություն է ստանում մարդու սահմանադրական արդարադատության իրավունքի ճանաչումը և երաշխավորումը: Դա հնարավոր է միայն սահմանադրական գանգատի /անհատական սահմանադրական դիմումների/ լիարժեք համակարգի արմատավորման ճանապարհով:
5. Բացահայտելով անհատական դիմումների համակարգի դրսևորման առանձնահատկությունները ՀՀ-ում, այդ համակարգը բնորոշվել է որպես սահմանադրական արդարադատության առանձնահատուկ ձև, սահմանադրական իրավունքի նորմերի և սահմանադրական դատավարական ընթացակարգերի ամբողջական համակարգ, որը յուրաքանչյուրին հնարավորություն է ընձեռում կոնկրետ գործով սահմանադրական դատարանում անմիջականորեն վիճարկել դատարանի վերջնական ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի կամ դրա առանձին դրույթների սահմանադրականությունը, որոնք խախտել են Սահմանադրությամբ ամրագրված իր հիմնարար իրավունքներն ու ազատությունները: Միաժամանակ, ընդգծելով մարդու իրավունքների ապահովման և պաշտպանության գործում անհատական դիմումների համակարգի դերը, կարևորել ենք անհատական դիմումների լիարժեք համակարգի ներդրման անհրաժեշտությունը, որը հնարավորություն կտա սահմանադրական դատարանում վիճարկել ոչ միայն օրենքների, այլ նորմատիվ և անհատական իրավական բոլոր ակտերի, այդ թվում և դատարանների որոշումների սահմանադրականությունը:

6. Անհատական սահմանադրական գանգատի քննության արդյունքում սահմանադրական դատարանը պետք է օժտված լինի նաև խախտված իրավունքների պաշտպանությունն իրականացնելիս դիմումատուին համարժեք փոխհատուցում տրամադրելու հարց բարձրացնելու իրավասությամբ: Այս դրույթի հետագա կիրառումը պետք է ընթանա այն ուղղությամբ, որ բոլոր այն դեպքերում, երբ անհատական դիմումների քննության արդյունքում սահմանադրական դատարանը կհանգի այն եզրակացության, որ դատարանի վերջնական ակտով դիմումատուի նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտը կամ այդ ակտի համապատասխան դրույթը, որով խախտվել են դիմումատուի իրավունքներն ու ազատությունները, չի համապատասխանում Սահմանադրությանը կամ համապատասխանում է Սահմանադրությանը միայն իր կողմից արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակում, սակայն դիմումատուի նկատմամբ կիրառվել է այլ մեկնաբանությամբ, ապա վերջինիս պահանջով սահմանադրական դատարանը պետք է քննության առնի նաև նյութական փոխհատուցում տրամադրելու հարցը՝ որոշման եզրափակիչ մասում հստակ սահմանելով դիմումատուին տրվող փոխհատուցման գումարի չափը և տրամադրման ժամկետը՝ այդ գումարի հատուցման պարտականությունը դնելով Հայաստանի Հանրապետության վրա: Միաժամանակ կարևորելով սահմանադրական դատարանի՝ համարժեք փոխհատուցում սահմանելու հանգամանքը, առաջարկվել է ՀՀ օրենսդրությամբ սահմանել բարոյական վնասի փոխհատուցման ինստիտուտը:
7. Մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանության տեսանկյունից կարևորվել է նաև «սահմանադրական դատարանի որոշման կատարում» եզրույթի իրավաբանական բովանդակության բացահայտումը, որն իր մեջ ներառում է պարտականությունների 2 խումբ՝ «ակտիվ», երբ պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինները, պաշտոնատար անձինք պարտավոր են իրականացնել բոլոր անհրաժեշտ գործողությունները, որպեսզի իրենց կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերը համապատասխանեն Սահմանադրության և սահմանադրական դատարանի որոշման պահանջներին, և «պասիվ», երբ պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինները, պաշտոնատար անձինք, ֆիզիկական և իրավաբանական անձինք պարտավոր են ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններ կատարելուց, որոնք կհակասեն Սահմանադրության և սահմանադրական դատարանի որոշման պահանջներին:
8. Իրավունքի գերակայության և իրավունքով իշխանության սահմանափակման սահմանադրական հիմնարար սկզբունքների երաշխավորման տեսանկյունից կարևոր է նաև սահմանադրական դատարանին՝ լիազորությունների հարցով իշխանության տարբեր

մարմինների միջև առաջացած վեճերը լուծելու և Սահմանադրությունը պաշտոնապես մեկնաբանելու լիազորությունների վերապահման հարցը: Առանց սահմանադրական դատարանին վերը նշված լիազորությունների վերապահման, վերջինս չի կարող արդյունավետ իրականացնել Սահմանադրության գերակայության ապահովման և սահմանադրականության հաստատման իր հիմնարար գործառույթը, որն էլ մարդու իրավունքների իրացման, ապահովման և պաշտպանության անխուսափելի բաղադրատարրն է:

9. Կարևորելով ընդհանուր իրավասության դատարանների միջոցով մարդու սահմանադրական արդարադատության իրավունքի իրացման հնարավորությունը, առաջարկվում է ՀՀ վարչական, քաղաքացիական և քրեական դատավարական օրենսգրքերով հստակ սահմանել դատավարության մասնակիցների կողմից դատավարության ցանկացած փուլում կոնկրետ գործով կիրառվող նորմի սահմանադրականությունը գնահատելու համար դատարաններին համապատասխան միջնորդություն ներկայացնելու, այդ միջնորդությունները քննարկելու կարգի և ժամկետների հետ կապված հարցերը: Իսկ ընդհանուր իրավասության դատարանների կողմից սահմանադրական դատարանի որոշումների լիարժեք կատարումն ապահովելու համար առաջարկվում է ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանել, որ. «Յուրաքանչյուր գործով ներկայացված փաստական հանգամանքների վերաբերյալ նորմատիվ իրավական ակտի համապատասխան նորմը կիրառելիս, ինչպես նաև նոր երևան եկած կամ նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով դատական ակտը վերանայելիս ընդհանուր իրավասության դատարանները պարտավոր են ղեկավարվել տվյալ նորմի՝ Սահմանադրության համապատասխանության վերաբերյալ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումներով»:

10. Ելնելով սահմանադրական արդարադատության համակարգում մարդու իրավունքների առավել արդյունավետ պաշտպանության նկատառումներից, առաջարկվում է «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքում կատարել որոշակի փոփոխություններ և լրացումներ. մասնավորապես

- օրենքի առանձին հոդվածով կանոնակարգել անհատական դիմումների գործերով սահմանադրական դատարան դիմող սուբյեկտների իրավահաջորդության ինստիտուտը, որը հնարավորություն կտա սահմանադրական դատարանին դատավարական իրավահարաբերություններից դիմումատուի դուրս գալու դեպքում վերջինիս փոխարինել նրա իրավահաջորդով,
- օրենքի 46-րդ հոդվածով սահմանել, որ անհատական դիմումների գործերով իրավաբանի կամ բարձրագույն իրավաբանական կրթություն ունեցող կամ սահմանադրական իրավունքի ոլորտում գիտական աստիճան ունեցող անձի մասնակցությունը պարտադիր է: Իսկ այն դեպքերի համար,

երբ անձը չի ունենա ֆինանսական հնարավորություններ վճարելու իրավաբանի մատուցած ծառայությունների համար, օրենքով նախատեսել պետական միջոցների հաշվին իրավաբանական օգնություն ստանալու սահմանադրական իրավունքի իրացման համապատասխան ընթացակարգեր,

- հիմք ընդունելով այն հանգամանքը, որ օրենքով սահմանված չէ անհատական դիմումների ներկայացման համար 6 ամսյա ժամկետը հարգելի պատճառներով բաց թողնելու դեպքերում այդ ժամկետի վերականգնման օրենքով սահմանված հիմքեր և համապատասխան ընթացակարգեր, առաջարկում ենք «Սահմանադրական դատարանի մասին» օրենքում առանձին գլուխ նվիրել դիմումների ներկայացման համար օրենքով սահմանված ժամկետի կասեցման և ընդհատման, ինչպես նաև կասեցված կամ ընդհատված ժամկետի վերսկսման հիմքերին, ինչպես նաև դրանց կիրառման ընթացակարգերին,

- օրենքի 68-րդ հոդվածի 11-րդ մասը խմբագրել այն տրամաբանությամբ, որ ոչ միայն անվավեր ճանաչված նորմատիվ ակտի կատարումն ապահովված, այլև նմանատիպ դրույթներ պարունակող այլ նորմերը նույնպես կորցնեն իրենց իրավաբանական ուժը՝ վիճարկվող ակտի ուժը կորցնելու հետ միաժամանակ,

- օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը խմբագրել հետևյալ բովանդակությամբ. «Գործը քննության ընդունելուց հետո սահմանադրական դատարանը կարող է դիմող կողմի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ մինչև գործի դատաքննության ավարտը կասեցնել վիճարկվող նորմատիվ իրավական ակտի գործողությունն այնքանով, որքանով որ կասեցման մասին որոշում չընդունելը կարող է հանգեցնել այնպիսի ծանր հետևանքների դիմող կողմի կամ հանրության համար, որոնք հետագայում հնարավոր չէ վերականգնել կամ փոխհատուցել»:

- հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «Սահմանադրական դատարանի մասին» օրենքով չի սահմանվում սահմանադրական դատարանի որոշումների կատարման «ակտիվ» պարտավորությունների բնույթի, այն կատարող սուբյեկտների և իրականացման ժամկետների հետ կապված հարցերը, առաջարկվում է օրենքի առանձին հոդվածով սահմանել հետևյալ իրավակարգավորումը.

«1. Այն դեպքերում, երբ սահմանադրական դատարանի կողմից վիճարկվող նորմատիվ իրավական ակտն ամբողջությամբ կամ մասնակիորեն ճանաչվում է Սահմանադրության պահանջներին հակասող և անվավեր, կամ ճանաչվում է Սահմանադրության պահանջներին համապատասխանող միայն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումներին համապատասխան, կամ սահմանադրական դատարանի որոշմամբ սահմանվում է, որ վիճարկվող նորմատիվ իրավական ակտում առկա է իրավական կարգավորման բաց, ապա Ազգային ժողովը, Հանրապետության

Նախագահը, կառավարությունը, վարչապետը, տեղական ինքնակառավարման մարմինները պարտավոր են սահմանադրական դատարանի որոշումն ուժի մեջ մտնելուց հետո ոչ ուշ, քան եռամսյա ժամկետում իրենց կողմից ընդունված նորմատիվ իրավական ակտերում կատարել համապատասխան փոփոխություններ և լրացումներ կամ ընդունել նոր նորմատիվ իրավական ակտեր՝ դրանցում ամրագրված դրույթները համապատասխանեցնելով սահմանադրական դատարանի որոշման պահանջներին:

2. Սույն հոդվածով սահմանված պարտավորությունները պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց համար յուրաքանչյուր կոնկրետ դեպքում ծագում են և ենթակա են կատարման այնքանով, որքանով որ բխում են սահմանադրական դատարանի որոշման պահանջներից:

3. Պետական իշխանության և տեղական ինքնակառավարման բոլոր մարմինները, պաշտոնատար անձինք իրենց օրինաստեղծ կամ նորմաստեղծ գործունեության ընթացքում պարտավոր են ղեկավարվել սահմանադրական դատարանի որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումներով»:

Հետազոտության գիտատեսական և գործնական նշանակությունը: Ատենախոսական աշխատանքի գիտատեսական նշանակությունն արտահայտվում է նրանում, որ գիտական մենագրության ձևով ընդհանրացվել են իրավունքի գերակայության երաշխավորմանը և սահմանադրական արդարադատության մարմինների միջոցով մարդու իրավունքների ապահովմանը և պաշտպանությանն առնչվող մի շարք հիմնախնդիրներ, հետազոտության արդյունքների հիման վրա մշակվել են կոնկրետ հայեցակարգային մոտեցումներ, որոնք կարող են օգտագործվել «սահմանադրական իրավունք», «համեմատական սահմանադրական իրավունք», «սահմանադրական վերահսկողությունը և հսկողությունը ՀՀ-ում» դասընթացներում և հետագա գիտական հետազոտություններում: Հիշատակված հիմնախնդիրների առնչությամբ կատարված վերլուծությունները, ներկայացված առաջարկություններն ու դրանց հիմնավորումները կարող են օգտագործվել նաև պետական իշխանության մարմինների օրինաստեղծ և իրավակիրառ գործունեության ընթացքում և նպաստել ՀՀ իրավական համակարգի և իրավակիրառական պրակտիկայի կատարելագործմանը:

Հետազոտության արդյունքների փորձարկումը: Հետազոտության արդյունքներն արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված գիտական հոդվածներում, որոնցում արտացոլվել են ատենախոսության մի շարք կարևոր դրույթներ:

Աշխատության կառուցվածքը: Հետազոտության առջև դրված խնդիրների համաչափ լուծման նկատառումներով պայմանավորված, ընտրվել է

աշխատության այնպիսի կառուցվածք, որը հնարավորություն է տվել համարժեք խորությամբ ներկայացնել հետազոտության առարկան կազմող հիմնախնդիրները: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, որոնք ներառում են թվով վեց պարագրաֆ, եզրակացությունից և օգտագործված նորմատիվ իրավական աղբյուրների ու գիտական աշխատությունների ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են թեմայի գիտական հետազոտման աստիճանը, հետազոտության օբյեկտը և առարկան, նպատակը և խնդիրները, ատենախոսության աղբյուրագիտական և մեթոդաբանական հիմքերը, գիտական նորույթը, հետազոտության տեսական և գործնական նշանակությունը, արդյունքների փորձարկումը, ատենախոսության կառուցվածքը, ինչպես նաև պաշտպանության ներկայացվող դրույթները:

Առաջին գլխում՝ **«Իրավունքի գերակայության երաշխավորման տեսամեթոդաբանական հիմնախնդիրները»** վերտառությամբ, փորձ է արված բացահայտելու «Իրավունք» և «Իրավունքի գերակայության սկզբունք» հասկացությունների բովանդակությունը, իրավունքի գերակայության երաշխավորման հրամայականները, դրանց կենսագործման հիմնախնդիրները, ինչպես նաև պատմականորեն ձևավորված բոլոր այն նախադրյալները, որոնք առանձին-առանձին վերցրած անհրաժեշտ են, իսկ միասին՝ բավարար իրավունքի գերակայության երաշխավորման համար:

Առաջին գլխի առաջին պարագրաֆում՝ **«Իրավունքի գերակայության հասկացությունը և երաշխավորման հիմնախնդիրները միջազգային և ներպետական իրավական համակարգերում»** վերտառությամբ, Հեղինակը, կարևորելով իրավունքի գերակայության սկզբունքի անգնահատելի և անփոխարինելի դերը մարդու իրավունքների ապահովման ու պաշտպանության գործում, բացահայտում է իրավունքի գերակայության երաշխավորման՝ համայն մարդկությանն ուղղված հրամայականները, որոնք իրենց համակցության մեջ ի զորու են երաշխավորելու իրավունքի գերակայությունը հանրային կյանքում: Այստեղ Հեղինակը որպես իրավունքի գերակայության երաշխավորման առաջնային հրամայական է դիտարկում «Իրավունքի գերակայության սկզբունք» հասկացության բացահայտումը, և այդ հանգամանքով պայմանավորված «իրավունք» հասկացության իրավագիտական բնութագրիչները վերհանելը, քանզի «իրավունք» հասկացության տարաբնույթ ընկալումներով և մեկնաբանություններով պայմանավորված պատմական տարբեր ժամանակաշրջաններում տարբեր կերպ է ընկալվել, մեկնաբանվել կամ ընդհանրապես բացառվել իրավունքի գերակայության սկզբունքը: Վերլուծելով պատմականորեն ձևավորված

իրավահասկացողության երկու հակադիր՝ լեգիստա-պոզիտիվիստական և բնական-իրավական (իրավաբանական) հայեցակարգերում իրավունքի ընկալման և դրսևորման սահմանները, ինչպես նաև իրավունքի և օրենքի նույնացման ու տարբերակման հիմնախնդիրները, Հեղինակն իրավաընկալման ժամանակակից մոտեցումների հիման վրա բացահայտում է «իրավունք» հասկացության էությունն ու բովանդակությունը: Այնուհետև այդ հայեցակարգային մոտեցումների հիման վրա բացահայտում է իրավունքի գերակայության սկզբունքի բովանդակությունը և նրա անկապտելի հատկանիշները, որոնց ամբողջականությունը և միաժամանակյա կիրառությունը հանրային կյանքում միայն կարող է վկայել իրավունքի գերակայության սկզբունքի լիարժեք կիրառման մասին: Այս համատեքստում Հեղինակը վերլուծել է նաև «իրավական օրենք» հասկացությունը՝ բացահայտելով այդ հասկացությունից բխող երեք կարևորագույն սկզբունքների՝ իրավունքի գերակայության սկզբունքի, ձևական հավասարության սկզբունքի և օրենքի գերակայության սկզբունքի փոխադարձ կապը և տարբեր բովանդակային ընդգրկում ունեցող գործառույթները (ընդգծումը մերն է՝ Ն.Ք.) :

Այնուհետև Հեղինակն անդրադառնում է իրավունքի գերկայության երաշխավորման մյուս հրամայականներին, ընդգծելով այն կարևորագույն իրողությունը, որ այն իրավական համակարգերում, որտեղ մարդու իրավունքներն ու ազատությունները սահմանադրորեն չեն ճանաչվել որպես անմիջական գործող իրավունք, չեն դրվել պետական իշխանության սահմանափակման հիմքում, չեն ստեղծվել այդ իրավունքների լիարժեք իրացման և արդյունավետ պաշտպանության անհրաժեշտ նախադրյալներ, այդ համակարգերում խոսք չի կարող լինել իրավունքի գերակայության, առավել ևս դրա երաշխավորվածության մասին: Հեղինակն ուսումնասիրում է նաև իրավունքի գերակայության միջազգային իրավական երաշխիքները, համակողմանիորեն վերլուծելով համամարդկային արժեքների պահպանմանն ու զարգացմանն ուղղված միջազգային իրավական բոլոր այն փաստաթղթերը, որտեղ բացահայտվում է իրավունքի գերակայության սկզբունքի բովանդակությունը և դրա երաշխավորման անառարկելի անհրաժեշտությունը:

Ուսումնասիրելով իրավունքի գերակայության երաշխավորման հրամայականները, Հեղինակը փորձում է այդ մեթոդաբանական մոտեցումներից ելնելով բացահայտել իրավունքի գերակայության երաշխավորման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետության սահմանադրական արդի լուծումներում և իրակակիրառական պարկտիկայում: Արդյունքում Հեղինակը գալիս է այն եզրահանգման, որ իրավակիրառական պրակտիկայում դեռևս հաղթահարված չէ շփոթը «իրավունքի գերակայություն» և «օրենքի գերակայություն» հասկացությունների ընկալման հարցում, իսկ սահմանադրական լուծումներում առկա են որոշակի բացթողումներ, մասնավորապես, չի հիշատակվում մարդու իրավունքների և

ազատությունների անօտարելի բնույթի մասին, այդ իրավունքները յուրաքանչյուր մարդու իր ծննդյան պահից պատկանելու, ինչպես նաև պետության՝ այդ իրավունքների և ազատությունների ապահովման և պաշտպանության առաջնային պարտականության մասին դրույթներ: Միաժամանակ Հեղինակն անդրադառնում է նաև մարդու իրավունքների հնարավոր սահմանափակումների հիմնահարցին՝ բացահայտելով միջազգային և ներպետական իրավական համակարգերում այդ հարցի վերաբերյալ ձևավորված հիմնարար սկզբունքները և դրանց կիրառման չափանիշները:

Առաջին գլխի երկրորդ պարագրաֆում՝ **«Իրավունքի գերակայության երաշխավորման նախադրյալները ՀՀ-ում»** վերտառությամբ, բացահայտվում են իրավունքի գերակայության երաշխավորման բոլոր այն նախադրյալները, որոնք իրենց համակցության մեջ կայուն հենք են ստեղծում իրավունքի գերակայության երաշխավորման համար: Վերլուծելով առանձին երկրներում ձևավորված հանրային կյանքի իրողությունները, Հեղինակը գալիս է այն եզրահանգման, որ այն երկրներում, որտեղ առավելագույնս ամբողջական կիրառություն ունեն մարդկության առաջադեմ մտածողների կողմից առաջադրված իրավունքի գերկայության երաշխավորման նախադրյալները, այնտեղ բավարար չափով երաշխավորված է իրավունքի գերակայությունը: Ուստի, իրավունքի գերկայության երաշխավորման հիմնախնդրի լուծումը ոչ թե պատմականորեն ձևավորված նախադրյալների անկատարության կամ նոր նախադրյալների առկայության բացի վերացումն է, այլ առկա նախադրյալների լիարժեք ընկալումն ու ամբողջական կենսագործումը:

Հեղինակն իրավունքի գերակայության երաշխավորման առաջնային նախադրյալ է դիտարկում իրավական պետականության կերտումը, քանզի իրավունքով իշխանությունը սահմանափակելու և իշխանության գործունեությամբ իրավունքը երաշխավորելու հրամայականները հանդիսանում են հենց իրավական պետության գաղափարական հենքը: Վերլուծելով իրավական պետականության ձևավորման և զարգացման պատմությունը, Հեղինակն առաջադրում է այն մոտեցումը, որ իրավական պետականությունը հնարավոր է կենսագործել միայն այն հասարակություններում, որտեղ իրավունքի գերակայությունը և իրավունքով իշխանության սահմանափակումը հանդիսանում են յուրաքանչյուր անհատի ինքնադրսևորման կենսական պահանջ, այդ պահանջն ունի ընկալման և կենսագործման ոչ միայն անհատական, այլ հասարակական բնույթ: Այս մոտեցումն էլ առաջ է բերում իրավունքի գերակայության երաշխավորման մյուս կարևորագույն նախադրյալի՝ ժողովրդավարության անհրաժեշտ որակների արմատավորման անհրաժեշտությունը, որի պայմաններում պետական իշխանությունը ստիպված է լինում կենսագործելու հասարակական պահանջը՝ երաշխավորելով իրավունքի գերակայությունը, իր իշխանությունն իրականացնելիս ղեկավարվելով և սահմանափակվելով միայն իրավունքով: Իսկ պետական

իշխանության նման գործելակերպի իրական երաշխիք է հանդիսանում քաղաքացիական հասարակությունը՝ իրավունքի գերակայության երաշխավորման ոչ պակաս կարևորագույն նախադրյալը, որը համապատասխան կառույցների միջոցով ունակ է ոչ միայն ինքնակառավարվելու, այլև ժողովրդավարական արժեքների կենսագործմամբ ուղղորդելու պետական իշխանության գործունեությունը դեպի իրավական պետականության կերտումը՝ հանդիսանալով իրական ժողովրդավարության կենսագործման և իրավական պետականության կերտման միակ լիիրավ սուբյեկտը:

Հեղինակը վերլուծում է նաև իշխանությունների տարանջատման սկզբունքի լիարժեք կիրառման անհրաժեշտությունը իրավունքի գերակայության երաշխավորման հարցում: Հիմք ընդունելով սահմանադրական իրավունքի տեսության մեջ իշխանությունների տարանջատման հիմնական չափանիշները, Հեղինակը սահմանում է իշխանությունների տարանջատման սկզբունքից բխող քայլերի հաջորդական շղթան, որոնք ընկած են ժողովրդավարության զարգացման ու իրավական պետության կայացման ուղին ընտրած յուրաքանչյուր պետության օրակարգային հարցերի հիմքում և դրանց խելամիտ լուծման հրամայականով է պայմանավորված իշխանությունների իրական տարանջատման սկզբունքի կիրառումը և իրավունքի գերակայության երաշխավորումը: Միաժամանակ վերլուծելով իշխանությունների տարանջատման սկզբունքի սահմանադրական լուծումները և իրավակիրառական պրակտիկան, Հեղինակն առաջ է քաշում մի շարք հիմնահարցեր, որոնք հետագա սահմանադրական փոփոխություններում առավել խորությամբ պետք է ուսումնասիրվեն և իշխանությունների իրական տարանջատման անհրաժեշտությունից միտված ստանան համարժեք սահմանադրական լուծումներ:

Այնուհետև Հեղինակը բացահայտում է Սահմանադրության գերակայության ապահովման և սահմանադրականության հաստատման բացառիկ կարևոր դերն իրավունքի գերակայության երաշխավորման և մյուս բոլոր նախադրյալների իրացման գործում: Այստեղ Հեղինակը վերլուծելով «Սահմանադրական մշակույթ», «Սահմանադրություն» և «Սահմանադրականություն» հասկացությունները, հանգում է այն համոզման, որ միայն Սահմանադրության գոյության փաստը դեռևս բավարար չէ սահմանադրական մշակույթի, առավել ևս սահմանադրականության մասին խոսելու համար: Անհրաժեշտ է, որպեսզի Սահմանադրությամբ ամրագրված արժեքային կողմնորոշիչները լիարժեք գիտակցվեն հասարակության բոլոր անդամների կողմից և կենսագործվեն հանրային կյանքում: Առանց երկրում սահմանադրականության հաստատման անհնար է երաշխավորված համարել իրավունքի գերակայությունը, քանզի հենց սահմանադրականությունն է հանդիսանում իրավունքի գերակայության առկայության և երաշխավորվածության միակ չափանիշը:

Երկրորդ գլխում՝ **«Դատական սահմանադրական վերահսկողության դերը մարդու սահմանադրական արդարադատության իրավունքի իրացման, նրա իրավունքների ապահովման և պաշտպանության ոլորտում»** վերտառությամբ, դիտարկվել են սահմանադրական արդարադատության տարբեր համակարգերում մարդու սահմանադրական արդարադատության իրավունքի իրացման, մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանության հիմնախնդիրները, ուսումնասիրվել են մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում սահմանադրական վերահսկողության միջազգային զարգացումների արդի միտումները: Սույն գլխի շրջանակներում բացահայտվել է «անհատական դիմումների համակարգ» հասկացության բովանդակությունը, այդ համակարգի դրսևորման առանձնահատկությունները ՀՀ իրավակիրառական պրակտիկայում, ինչպես նաև ներկայացվել է այդ համակարգի զարգացման հիմնական ուղղությունները:

Երկրորդ գլխի առաջին պարագրաֆում՝ **«Մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում սահմանադրական վերահսկողության միջազգային զարգացումների արդի միտումները»** վերտառությամբ, Հեղինակը կարևորելով մարդկության արժանապատիվ գոյության բնական իրավունքի իրացման հարցում իրավունքի գերակայության երաշխավորման անգնահատելի դերը, ընդգծում է այն ելակետային դրույթը, որ ներպետական իրավական համակարգերում գոյություն ունի իրավունքի գերակայության երաշխավորման միայն մեկ ուղի. այն է՝ իրավունքի էությունն ու բովադակությունն առանց աղճատումների արտացոլել հասարակության Հիմնական օրենքում, ամրագրել կենսագոյի հիմնական կանոններում և Սահմանադրության գերակայության ապահովմամբ ու սահմանադրականության հաստատմամբ հասնել իրավունքի գերակայության երաշխավորմանը: Իսկ այդ հարցում բացառիկ կարևոր դեր է վերապահվում սահմանադրական վերահսկողություն իրականացնող մասնագիտացված մարմիններին, քանզի վերջիններիս կոչումն ու գլխավոր առաքելությունը հենց Սահմանադրության գերակայության ապահովումը և սահմանադրականության հաստատումն է:

Այնուհետև ուսումնասիրելով սահմանադրական արդարադատության տարբեր համակարգերի ձևավորման և զարգացման էվոլուցիան, Հեղինակը հանգում է այն եզրակացության, որ յուրաքանչյուր պետություն որդեգրել է սահմանադրական վերահսկողության այս կամ այն համակարգն առաջին հերթին հաշվի առնելով իր երկրում գործող պետական կառավարման համակարգի մոդելը, նրանում առկա հիմնախնդիրները և դրանց խելամիտ լուծման հրամայականները: Ուստի, կարևորն այն չէ, թե սահմանադրական վերահսկողության ինչպիսի համակարգ է ներդրվել, կարևորն այն է, թե ընտրված համակարգը որքանով է ի զորու ապահովելու Սահմանադրության գերակայությունը, իշխանությունների տարանջատման սահմանադրական հաշվեկշիռը և մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը: Հենց դա է գերխնդիրը, որը հանդիսանում է յուրաքանչյուր սոցիալական

հանրության արժանապատիվ գոյության առաջնային նախապայմանը և հասարակական հարաբերությունների զարգացմանը համընթաց ձեռք է բերում առավել մեծ կարևորություն և խելամիտ լուծման անհրաժեշտություն:

Հեղինակն ուսումնասիրում է նաև սահմանադրական արդարադատության «կենտրոնացված», «ապակենտրոնացված» և «խառը» համակարգերում մարդու սահմանադրական արդարադատության իրավունքի իրացման, մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանության հիմնախնդիրները, այդ տեսանկյունից վերլուծում է տարբեր համակարգերում առկա առավելություններն ու թերությունները: Ելնելով այն նկատառումներից, որ ՀՀ-ը որդեգրել է սահմանադրական վերահսկողության եվրոպական համակարգին բնորոշ տարրերը, Հեղինակն առավել հանգամանորեն ուսումնասիրում է սահմանադրական վերահսկողության եվրոպական համակարգի երկրներում մարդու սահմանադրական արդարադատության իրավունքի իրացման ուղղակի և անուղղակի ձևերը, դրանց գործադրման առանձնահատկությունները և զարգացման արդի միտումները:

Երկրորդ գլխի երկրորդ պարագրաֆում՝ **«Անհատական դիմումների համակարգն ու դրա առանձնահատկությունները Հայաստանի Հանրապետությունում»** վերտառությամբ, Հեղինակը բացահայտում է «անհատական դիմումների համակարգ» հասկացության էությունն ու բովանդակությունը, վերլուծում է այդ համակարգի դրսևորման առանձնահատկությունները ՀՀ իրավակիրառական պրակտիկայում՝ միաժամանակ ներկայացնելով այդ համակարգի զարգացման այն հիմնարար ուղղությունները, որոնք համահունչ են եվրոպական զարգացումների արդի միտումներին:

Անհատական դիմումների համակարգն ու դրա առանձնահատկությունները համակողմանիորեն ուսումնասիրելու համար Հեղինակն այդ համակարգը պայմանականորեն տարանջատում է երեք փուլերի: Առաջին փուլում ուսումնասիրվում են անհատական դիմումներով սահմանադրական դատարան դիմող իրավասու սուբյեկտների կազմը, ինչպես նաև անհատական դիմումներին օրենքով ներկայացվող պահանջները, որոնք ընդհանուր առմամբ արտահայտվում են հետևյալում՝ 1) պետք է առկա լինի դատարանի վերջնական ակտը, 2) պետք է սպառված լինեն դատական պաշտպանության բոլոր միջոցները, 3) պետք է անհատական դիմումով վիճարկվի դատարանի վերջնական ակտով անձի նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը, 4) պետք է վճարվի պետական տուրք, 5) անհատական դիմումը պետք է հղումներ պարունակի օրենքի այն դրույթներին, որոնց սահմանադրականությունը վիճարկվում է, և Սահմանադրության այն դրույթներին, որոնց, դիմողի գնահատմամբ, հակասում են տվյալ օրենքի դրույթները, ինչպես նաև պետք է պարունակի Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ, 6) դիմումը պետք է

ներկայացվի դատական ակտի վիճարկման հնարավորությունները սպառվելու պահից ոչ ուշ, քան վեց ամիս հետո:

Երկրորդ փուլում Հեղինակն ուսումնասիրում է անհատական դիմումների քննության՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով սահմանված ընթացակարգային առանձնահատկությունները, որոնք վերաբերում են՝ 1) անհատական դիմումների նախնական ուսումնասիրմանը և դիմումների՝ քննության ընդունելու կամ քննությունը մերժելու հարցի լուծմանը, 2) անհատական դիմումների քննության հնարավոր շրջանակների բացահայտմանը, 3) միևնույն հարցի վերաբերյալ գործերի համատեղ քննությանը, 4) անհատական դիմումների քննության մրցակցային բնույթին, 5) անհատական դիմումների քննության հրապարակային բնույթին, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ նաև դռնփակ քննությանը, 6) անհատական դիմումների քննության գրավոր և բանավոր ընթացակարգերին, 7) վիճարկվող նորմատիվ կամ անհատական իրավական ակտի գործողության կասեցման հնարավորություններին այն դեպքերում, երբ նորմատիվ ակտի հետագա գործողությունը կարող է այլոց իրավունքների խախտման պատճառ դառնալ, 8) գործի հետագա քննության կարճման հնարավորություններին այն դեպքերում, երբ դիմումատուն հետ է վերցնում իր ներկայացրած դիմումը, 9) անհատական դիմումների գործերով որոշումների ընդունման ժամկետներին:

Երրորդ փուլում Հեղինակն ուսումնասիրում է անհատական դիմումների գործերով սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների բնույթին և դրանց կատարման առանձնահատկություններին վերաբերող հարցերը, որոնք ընդհանուր առմամբ հանգում են՝ 1) որոշումների՝ ժամանակային գործողությանը, 2) որոշումների վերանայման հնարավորություններին, 3) որոշումների բնույթին և դրանց կատարման առանձնահատկություններին: Այստեղ Հեղինակը բացահայտում է «սահմանադրական դատարանի որոշման կատարում» եզրույթի իրավաբանական բովանդակությունը՝ առանձնացնելով այդ հասկացությունից բխող «ակտիվ» և «պասիվ» պարտականությունների օրենսդրական ամրագրման մեխանիզմները (ընդգծումը մերն է՝ Ն.Ք.):

Ուսումնասիրելով ՀՀ-ում գործող անհատական դիմումների համակարգը և այն համադրելով եվրոպական առաջադիմական երկրներում գործող համակարգերի հետ, Հեղինակը որոշակի առանցքային հարցերի վերաբերյալ հիմնավորում է օրենսդրական մի շարք փոփոխությունների իրականացման անհրաժեշտությունը, որոնք միտված են անհատական դիմումների համակարգի միջոցով մարդու իրավունքների համընդգրկուն և արդյունավետ պաշտպանությանը:

Երրորդ գլխում՝ **«Մարդու սահմանադրական արդարադատության իրավունքի երաշխավորման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում»** վերտառությամբ, քննարկվել է մարդու սահմանադրական արդարադատության իրավունքի երաշխավորման,

սահմանադրական դատարանի և պետական իշխանության մարմինների արդյունավետ փոխգործակցության ապահովման հիմնախնդիրները, վերլուծվել է մարդու սահմանադրական արդարադատության իրավունքի իրացման ուղղակի և անուղղակի ձևերի իրացման հնարավորությունները, դրանց փոխլրացման մեխանիզմները, ինչպես նաև հիմնավորվել է որոշակի արմատական քայլերի իրականացման անհրաժեշտությունը, որոնք կարող են նպաստել մարդու սահմանադրական արդարադատության իրավունքի լիարժեք իրացմանը: Արդյունքում ներկայացվել են ՀՀ օրենսդրության ու իրավակիրառական պրակտիկայի կատարելագործման մի շարք գործնական առաջարկություններ:

Երրորդ գլխի առաջին պարագրաֆում՝ **«Մարդու սահմանադրական արդարադատության իրավունքի երաշխավորման նախադրյալների ամրապնդման ուղիները Հայաստանի Հանրապետությունում»** վերտառությամբ, Հեղինակը կարևորելով մարդու սահմանադրական արդարադատության իրավունքի անգնահատելի դերը երկրում Սահմանադրության գերակայության ու կենսունակության ապահովման, սահմանադրականության հաստատման և իրավունքի գերակայության երաշխավորման հարցերում, այդ տեսանկյունից հիմնավորում է անհատական սահմանադրական գանգատի լիարժեք համակարգի ներդրման անառարկելի անհրաժեշտությունը: Այս համատեքստում Հեղինակն անդրադառնում է անհատական դիմումների լիարժեք համակարգի միջոցով սահմանադրական վերահսկողության օբյեկտ հանդիսացող իրավական ակտերի շրջանակին՝ առաջարկելով, որ անհատական դիմումների լիարժեք համակարգի միջոցով սահմանադրական վերահսկողության օբյեկտ հանդիսանան ոչ միայն օրենքները, այլ նորմատիվ և անհատական իրավական բոլոր ակտերը, այդ թվում և դատարանների որոշումները:

Այնուհետև ուսումնասիրելով եվրոպական երկրների փորձը, Հեղինակը հիմնավորում է այն մոտեցումը, որ անհատական դիմումների լիարժեք համակարգը կարող է հանդիսանալ նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի համար լրացուցիչ իրավական պաշտպանության միջոց՝ նվազեցնելով եվրոպական դատարան մուտքագրվող դիմումների քանակը: Սակայն դրա համար անհրաժեշտ է նաև, որ ՀՀ-ում անհատական դիմումների քննությունն իրականացվի Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համահունչ, սահմանադրական դատարանն օժտված լինի խախտված իրավունքները վերականգնելու և համարժեք փոխհատուցման հարց բարձրացնելու իրավասությամբ, իսկ սահմանադրական դատարանի ընդունած որոշումներն անվերապահորեն կատարվեն իրավունքի բոլոր սուբյեկտների կողմից:

Այնուհետև փաստելով, որ Սահմանադրությունը պաշտոնապես մեկնաբանելու և լիազորությունների հարցով իշխանության տարբեր մարմինների միջև առաջացած վեճերը լուծելու լիազորությունները

սահմանադրական դատարանի հիմնարար գործառույթի արդյունավետ իրականացման անքակտելի բաղադրատարրն են, Հեղինակն ընդգծում է այն կարևորագույն դրույթը, որ առանց թվարկված լիազորությունների վերապահման սահմանադրական դատարանը չի կարող արդյունավետորեն իրականացնել մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը:

Մարդու սահմանադրական արդարադատության իրավունքի երաշխավորման տեսանկյունից Հեղինակը կարևորում է նաև հանրային բարձր իրավագիտակցության ձևավորման անհրաժեշտությունը: ՀՀ-ում ձևավորված իրավակիրառական պրակտիկայի վերլուծության արդյունքում Հեղինակը հանգում է այն եզրակացության, որ մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության բոլոր կառուցակարգային մեխանիզմներն իմաստավորվում և արժևորվում են այնքանով, որքանով որ առկա է մարդկային գիտակցված և կամային վարքը՝ պայքարելու և վերականգնելու իր խախված իրավունքներն ու ազատությունները: Մարդկության ողջ պատմական զարգացման ընթացքում միարժեքորեն հաստատվել է այն իրողությունը, որ մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների գոյությունը, նույնիսկ ամենակատարյալ կառուցակարգային երաշխիքներն անգամ չեն կարող ապահովել ցանկալի արդյունք, եթե չիրականացվեն արմատական քայլեր հասարակական գիտակցության և մասնավորապես իրավագիտակցության բարձրացման ուղղությամբ, որի արդյունքում օրենքները կընկալվեն ոչ թե որպես օտարի պարտադրանք ու արգելակ ինքնության դրսևորումների հանդեպ, այլ ամեն մի մարդու համար ազատության մաթեմատիկա:

Երրորդ գլխի երկրորդ պարագրաֆում՝ **«Պետական իշխանության մարմինների գործառնական և կառուցակարգային փոխհարաբերություններին ներկայացվող նոր մարտահրավերները մարդու սահմանադրական արդարադատության իրավունքի իրացման հարցերում»** վերտառությամբ, Հեղինակն ուսումնասիրում է մարդու իրավունքների սահմանադրական պաշտպանության անուղղակի ձևերի իրացման հնարավորությունները, բացահայտում պետական իշխանության տարբեր մարմինների միջոցով մարդու սահմանադրական արդարադատության իրավունքի իրացման առավելություններն ու թերությունները՝ ներկայացնելով պետական իշխանության մարմինների և սահմանադրական դատարանի ակտիվ փոխգործակցության ապահովման նոր մոտեցումներ:

Հեղինակն առաջին հերթին անդրադառնում է ընդհանուր իրավասության դատարանների՝ նախնական հարցումներով սահմանադրական դատարան դիմելու ընթացակարգին, դրա իրացման հնարավորություններին, սահմանադրական դատարանի և ընդհանուր իրավասության դատարանների իրավասությունների հստակ տարանջատման, վերջիններիս հայեցողության սահմանափակումների հիմնահարցերին, որոնք ելակետային են համարվում սահմանադրական դատարանում մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանությունն իրականացնելիս: Այստեղ հեղինակն ընդհանուր

իրավասության դատարանների՝ սեփական նախաձեռնությամբ սահմանադրական դատարան դիմելու և կոնկրետ գործով կիրառման ենթակա նորմատիվ ակտի սահմանադրականությունը վիճարկելու հնարավորությունները ընդլայնելու համար առաջարկում է օրենսդրորեն հստակ սահմանել դատավորների նկատմամբ համարժեք կարգապահական տույժեր կիրառելու հնարավորություն բոլոր այն դեպքերի համար, երբ ընդհանուր իրավասության որևէ ատյանի դատարանի կողմից կոնկրետ գործով կիրառված նորմատիվ իրավական ակտը կամ դրա որևէ դրույթը հետագայում նույն գործի շրջանակներում կվիճարկվի սահմանադրական դատարանում և կճանաչվի Սահմանադրության պահանջներին հակասող և անվավեր:

Հեղինակը դիտարկում է նաև ՀՀ գլխավոր դատախազի՝ կոնկրետ գործին առնչվող նորմատիվ ակտերի դրույթների սահմանադրականությունը սահմանադրական դատարանում վիճարկելու հնարավորությունը, փաստելով, որ այս դեպքում ևս գործող քրեադատավարական օրենսդրությամբ որևէ ձևով չի կարգավորվում գլխավոր դատախազի կողմից սահմանադրական դատարան դիմելու, այդ դեպքերում քրեական գործի վարույթը կասեցնելու, կասեցված վարույթը վերսկսելու, նման միջնորդությամբ գլխավոր դատախազին դիմելու՝ ինչպես վարույթն իրականացնող անձանց, այնպես էլ դատավարության մասնակիցների իրավունքների իրացման, ներկայացված միջնորդությունները քննարկելու կարգի և ժամկետների հետ կապված հարցերը, որոնց համալիր օրենսդրական կարգավորման անհրաժեշտությունը արդիական է և հրատապ:

Հեղինակն ուսումնասիրում է նաև մարդու իրավունքների պաշտպանի միջոցով մարդու սահմանադրական արդարադատության իրավունքի իրացման հնարավորությունը, ընդգծելով այն կարևորագույն հանգամանքը, որ այս դեպքում ոչ միայն պաշտպանվում են մարդու իրավունքներն ու ազատությունները, այլև երաշխավորվում է Սահմանադրության գերակայությունն ու կենսունակությունը, ինչն այլոց իրավունքների և ազատությունների լիարժեք իրացման անհրաժեշտ պայման է: Ուստի, մարդու իրավունքների պաշտպանի կողմից իրականացվող բոլոր հնարավոր քայլերը պետք է ուղղված լինեն ոչ միայն մարդու իրավունքների խախտումները բացահայտելուն և խախտված իրավունքները վերականգնելուն, այլև այդ իրավունքները խախտած նորմատիվ իրավական ակտերի սահմանադրականությունը վիճարկելուն՝ կանխելով հետագա նմանատիպ իրավախախտումները:

Համառոտ անդրադարձ է կատարվում նաև ՀՀ Ազգային ժողովի որոշակի թվով պատգամավորների, Հանրապետության Նախագահի և ՀՀ կառավարության միջոցով մարդու սահմանադրական արդարադատության իրավունքի իրացման հնարավորություններին: Այստեղ Հեղինակն ընդգծում է այն կարևորագույն հանգամանքը, որ թե՞ Հանրապետության Նախագահը, թե՞ Ազգային ժողովի պատգամավորները և թե՞ ՀՀ կառավարությունը իրենց

գործունեության ընթացքում ուղղակի կամ անուղղակի ձևով առնչվում են մարդու իրավունքների և ազատությունների օրենսդրական ամրագրման, այդ իրավունքների իրացման անհրաժեշտ նախադրյալների ստեղծման, ինչպես նաև խախտումներից և չարաշահումներից դրանց պաշտպանության գործընթացներին, ուստի կարող են մեծապես նպաստել մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանությանը, եթե Սահմանադրությամբ սահմանված սահմանադրական դատարան դիմելու իրենց լիազորությունն իրացնեն ոչ թե սուբյեկտիվ հայեցողությամբ, այլ Սահմանադրությունն ու իրավունքի գերակայությունը երաշխավորելու նկատառումներից ելնելով:

Ուսումնասիրելով 2005 թվականից ի վեր նորմատիվ ակտերի սահմանադրականության հարցով ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումների քանակը, Հեղինակը հանգում է այն եզրակացության, որ չնայած ՀՀ Սահմանադրությամբ սահմանված է նորմատիվ իրավական ակտերի սահմանադրականության հարցով սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող սուբյեկտների լայն շրջանակ, սակայն երկրում սահմանադրականության հաստատման և իրավունքի գերակայության երաշխավորման գործում հիմնարար և առաջնային դերը վերապահվում է ֆիզիկական անձանց: Ասվածը հիմնավորվում է այն ելակետային փաստարկով, որ 2006-2012թ. նորմատիվ ակտերի սահմանադրականության հարցով սահմանադրական դատարանի կողմից քննության առնված դիմումների մոտ 84 տոկոսը բաժին է ընկնում հենց անհատական դիմումներին, իսկ 16 տոկոսը՝ սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող մյուս բոլոր սուբյեկտներին: Հիշատակված փաստերը միարժեքորեն վկայում են այն մասին, որ մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը պետք է լինի սահմանադրական արդարադատության մարմինների առաջնային գործառույթը, քանզի հենց անհատական դիմումների համակարգն է հանդիսանում սահմանադրական դատարանների կողմից երկրում սահմանադրականության հաստատման և իրավունքի գերակայության երաշխավորման առաջնային գրավականը:

Եզրակացությունում ընդգրկված են հետազոտության հիմնական արդյունքներն ու Հեղինակի եզրահանգումները, որոնք ամփոփ հանգում են հետևյալին.

- Հասարակական կյանքում բացի իրավական ձևից չկա և սկզբունքորեն չի կարող լինել կեցության որևէ այլ ճշմարիտ ձև, իսկ այդ ճշմարիտ կեցության շարունակականությունը ապահովելու միակ ճանապարհը՝ իրավունքի գերակա բնույթի երաշխավորումն է հանրային կյանքի բոլոր ոլորտներում,
- Իրավունքի գերակայության սկզբունքի երաշխավորման հրամայականներն ուղղված են աշխարհի ողջ մարդկությանը և դրանց համարժեք ընկալումն ու լիարժեք կիրառումը հանրային կյանքում աշխարհում պատերազմների, բռնությունների և իշխանությունների կամայական դրսևորումների կանխարգելման և վերացման միակ իրավական երաշխիքն է: Այդ

հրամայականներն արտահայտվում են հետևյալում՝ 1) յուրաքանչյուր պետություն պետք է իր Հիմնական օրենքում ամրագրի, որ մարդու բնական և անօտարելի իրավունքները հանդիսանում են բարձրագույն արժեք, անմիջականորեն գործող իրավունքներ, որոնք սահմանափակում են պետական իշխանությունը և պայմանավորում օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների գործունեության բնույթը, 2) յուրաքանչյուր պետություն պետք է հարգի մարդու բնական և անօտարելի իրավունքները՝ ստեղծելով այդ իրավունքների լիարժեք իրացման և խախտումներից դրանք պաշտպանելու բոլոր անհրաժեշտ նախադրյալները, 3) յուրաքանչյուր պետություն պետք է հասարակական հարաբերությունների իրավակարգավորումն իրականացնի «իրավական օրենքներով», 4) յուրաքանչյուր պետություն պետք է առավելագույնս համագործակցի միջազգային բոլոր այն կազմակերպությունների հետ, որոնց գործունեության առանցքն իրավունքի գերակայության երաշխավորումն է, 5) յուրաքանչյուր պետություն Սահմանադրությամբ պետք է հստակ սահմանի համընդհանուր ճանաչում ստացած այն հիմնարար չափանիշները, որոնց շրջանակներում հնարավոր է սահմանափակել մարդու իրավունքներն ու ազատությունները:

- Իրավունքի գերակայության երաշխավորման համար պարտադիր ու հիմնական նախադրյալներ են հանդիսանում՝ 1) իրավական պետականության և քաղաքացիական հասարակության կայացումը, 2) իրավունքով իշխանության սահմանափակումը, 3) ժողովրդավարական արժեքների արմատավորումը, իշխանությունների ընտրովիությունը, գործունեության թափանցիկությունն ու վերահսկելիությունը, 4) իշխանությունների հստակ տարանջատումը և հավասարակշռումը, 5) Սահմանադրության գերակայության ապահովումն ու սահմանադրականության հաստատումը, 6) սահմանադրական վերահսկողության կայուն և հուսալի համակարգի առկայությունը: Այդ նախադրյալները ձևավորվել, զարգացել և մարդկության իմաստավորված գոյությամբ ապացուցվել են ողջ պատմական զարգացման ընթացքում, յուրաքանչյուր սերունդ հասարակական կյանքի տվյալ ժամանակաշրջանին բնորոշ օրինաչափությունների վերլուծությունները հավելելով անցյալի փոխանցված արժեքներին, զարգացրել է այն և փոխանցել հետագա սերունդներին, և այսպես շարունակաբար այս արժեքները նոր իմաստ և նշանակություն ձեռք բերելով հարստացվել և փոխանցվել են մեզ: Իսկ ներկա սերունդների գերխնդիրն այդ արժեքները լիարժեք ընկալելու, դրանց կենսունակություն հաղորդելու և շարունակականությունը երաշխավորելու մեջ է:
- Սահմանադրությունն իրավունքի կեցության և արտահայտման բարձրագույն իրավական ձևն է, սահմանադրականությունը՝ իրավունքի կենսագործման և նյութականացման բարձրագույն իրավական ձևը, իսկ սահմանադրական մշակույթը՝ համամարդկային արժեքներից բխող համակեցության հիմնարար

կանոններ սահմանելու, դրանցով ապրելու և սոցիալական հանրության յուրաքանչյուր անհատի վարքագծում կենսագործելու համընդհանուր ձևավորված մշակույթ: «Սահմանադրական մշակույթ», «Սահմանադրություն» և «Սահմանադրականություն» հասկացությունները խորը մշակութային երևույթներ են, ունեն արժեհամակարգային փոխպայմանավորված ամուր արմատներ, և հանդիսանում են միևնույն երևույթի տարաբնույթ դրսևորումները՝ համապատասխանաբար հանրային գիտակցությունում, Հիմնական օրենքում և հասարակական կյանքում:

- Սահմանադրական վերահսկողությունը սոցիալական հանրության կենսագոյի հիմնարար կանոնների գերակայության և կենսունակության ապահովման պետական կարևորագուն գործառույթ է, իսկ սահմանադրական արդարադատությունը՝ դատական սահմանադրական վերահսկողության մասնագիտացված ձև, սահմանադրական իրավունքի նորմերի և սահմանադրական դատավարական ընթացակարգերի ամբողջական համակարգ, որի միջոցով երաշխավորվում է Սահմանադրության գերակայությունն ու կենսունակությունը, ապահովվում է իշխանությունների տարանջատման սահմանադրական հաշվեկշիռը և երաշխավորում է մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների սահմանադրական պաշտպանությունը:
- Սահմանադրական դատարանում մարդու իրավունքների ուղղակի պաշտպանության ամենատարածված ձևն անհատական սահմանադրական գանգատի համակարգն է, որի լիարժեք համակարգն ունակ է ապահովելու մարդու իրավունքների համընդգրկուն պաշտպանությունը ներպետական իրավական համակարգում:
- Մարդու իրավունքների սահմանադրական պաշտպանության անուղղակի ձևի լիարժեք իրացման համար հարկ է, որ բոլոր պետական մարմինները, որոնց սահմանադրական հիմնարար գործառույթը մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունն է, խստագույնս հետևեն ժամանակի քննությունը բռնած այն հիմնարար սկզբունքին, որ առանց Սահմանադրության գերակայության ապահովման և սահմանադրականության հաստատման անհնար է հասնել իրավունքի գերակայության երաշխավորմանը:
- Երկրում սահմանադրականության հաստատման 2 ճանապարհ գոյություն ունի՝ 1) երբ հանրային իշխանության բոլոր մարմինների և այդ իշխանության իրավազորության ներքո գտնվող յուրաքանչյուր անձի արժեհամակարգի անօտարելի բաղադրատարրն է հանդիսանում Սահմանադրությամբ ամրագրված արժեքային համակարգը, որի կենսունակությունը հանրային կյանքում ապահովվում է իրավունքի սուբյեկտների բարձր իրավագիտակցությամբ և ազատ կամքով պայմանավորված համարժեք գործելակերպով, 2) երբ Սահմանադրությամբ ամրագրված արժեհամակարգը չի ընկալվում և չի դառնում հանրային իշխանության

մարմինների գործունեության և այդ իշխանության իրավազորության ներքո գտնվող անձանց վարքագծի անօտարելի տարրը, և միայն սահմանադրական արդարադատություն իրականացնող մասնագիտացված մարմինների կողմից արդարադատության իրականացման արդյունքում ընդունված որոշումների լիարժեք կատարմամբ է, որ հաստատվում է սահմանադրականությունը:

- Առանց մարդու իրավունքների սահմանադրական պաշտպանության ուղղակի և անուղղակի ձևերի լիարժեք իրացման նախադրյալների ստեղծման անհնար է երաշխավորել Սահմանադրության գերակայությունն ու անմիջական գործողությունը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են Հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Սահմանադրական արդարադատությունը որպես մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության կարևորագույն երաշխիք// Սահմանադրական դատարանի տեղեկագիր, թիվ 3 (52) 2009, էջեր 25-32:
2. Սահմանադրության գերակայության ապահովումը և սահմանադրականության հաստատումը որպես իրավունքի գերակայության երաշխավորման գլխավոր նախադրյալ//Սահմանադրական դատարանի տեղեկագիր, թիվ 4 (66) 2012, էջեր 5-13:
3. Անհատական սահմանադրական գանգատի համակարգը որպես մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայով սահմանված իրավունքների ներպետական իրավական պաշտպանության արդյունավետ միջոց//«Դատական իշխանություն» գիտամեթոդական ամսագիր, թիվ 2 (163), 2013, էջեր 24-29:
4. Ընդհանուր իրավասության դատարանների և սահմանադրական դատարանի փոխհարաբերությունները մարդու սահմանադրական արդարադատության իրավունքի իրացման հարցերում // Սահմանադրական դատարանի տեղեկագիր, թիվ 3 (69) 2013, էջեր 5-14:
5. Իշխանությունների տարանջատման սկզբունքը որպես իրավունքի գերակայության երաշխավորման կարևորագույն նախապայման // «Դատական իշխանություն» գիտամեթոդական ամսագիր, թիվ 6 (167), 2013, էջեր 16-21:

КОЧАРЯН НАРЕК МАМИКОНОВИЧ

КОНСТИТУЦИОННО-ПРАВОВЫЕ ГАРАНТИИ ПО ОБЕСПЕЧЕНИИ И ЗАЩИТЕ ПРАВ ЧЕЛОВЕКА В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ (В КОНТЕКСТЕ ОСУЩЕСТВЛЕНИЯ ПРАВА ЧЕЛОВЕКА НА КОНСТИТУЦИОННОЕ ПРАВОСУДИЕ)

РЕЗЮМЕ

Диссертация посвящена исследованию вопросов эффективной защиты нарушенных прав и свобод человека через реализацию права на конституционного правосудие, обеспечения верховенства и жизнеспособности Конституции, а также гарантии верховенства права.

В диссертации в структурной целостности проанализированы особенности восприятия и проявления права в разные исторические периоды, на основе которых раскрыто содержание понятий «Право» и «Принцип верховенства права», императивы человечества на гарантию верховенства права, а также все те исторические предпосылки, сочетание которых создает устойчивую основу для обеспечения верховенства права. Также раскрыта суть понятия «правовой закон» с разграничением многогранных и разнообразных функций трех ключевых принципов, которые исходят из понятия «правовой закон», они же: принцип верховенства права, принцип формального равенства и принцип верховенства закона.

Отметив неоценимую роль обеспечения верховенства права в реализации естественного права человека на достойное существование, в диссертации автор также подчеркивает важность проблем повышения эффективности деятельности специализированных учреждений, осуществляющих конституционный контроль, так как они уполномочены, с одной стороны, защищать права и свободы человека и гражданина, закрепленные в Конституции, с другой стороны, обеспечивать конституционно-правовой характер общественных отношений, создавая реальные предпосылки для обеспечения верховенства права.

Автор работы всесторонне анализирует текущие международные тенденции и развитие конституционного контроля в вопросах защиты прав человека и проблемы гармонизации в системе конституционного правосудия Республики Армения. Раскрывается суть концепции «система индивидуальной жалобы», ее бесценная и незаменимая роль в обеспечении и защите прав человека, обеспечении верховенства и жизнеспособности Конституции, становлении конституционности в стране и гарантии верховенства права, и в связи сданными реалиями оправдывается несомненная необходимость внедрения полноценной системы

индивидуальной жалобы. В диссертации автор также отмечает важность необходимости закрепления за Конституционным судом права на поднятие вопросов по восстановлению нарушенных прав и предложению адекватной компенсации, одновременно предлагая определить законодательством Республики Армения институт возмещения морального ущерба. Только при таких обстоятельствах Конституционный суд будет вправе определить размер компенсации, эквивалентный сумме компенсации, устанавливаемой решением Страсбургского суда. В целях обеспечения полного и всестороннего выполнения решений Конституционного суда автор раскрывает правовое содержание термина «выполнение решения Конституционного суда», разделяя механизмы законодательного закрепления «активных» и «пассивных» обязательств, исходящих из этой концепции.

Исследованы возможности осуществления косвенных форм конституционной защиты прав человека, затрагивая судебный порядок обращения суда общей юрисдикции к Конституционному суду с предварительными запросами и возможности его осуществления, а также проблемы четкого разделения полномочий Конституционного суда и суда общей юрисдикции и вопросы ограничения усмотрения последних. Также выявлены преимущества и недостатки осуществления права человека на конституционное правосудие через иные органы государственной власти, представлены новые подходы к обеспечению активного сотрудничества между государственными органами и Конституционным судом. Исследования, проведенные автором, показывают, что индивидуальные жалобы составляют около 84% обращении конституционности нормативных актов, которые были поданы в Конституционный суд РА и рассмотрены с 2005 года, в то время как всеми остальными субъектами, имеющими право обратиться в Конституционный суд, были поданы лишь 16% вышеуказанных ходатайств. На основе этой статистики, автор приходит к выводу, что, несмотря на широкий круг субъектов, которые согласно Конституции РА имеют право обратиться в Конституционный суд с ходатайством о конституционности нормативных правовых актов, фундаментальная и основная роль в установлении конституционности и обеспечении верховенства права в Армении принадлежит физическим лицам.

В диссертации, изучив данные вопросы, автор делает не только теоретические выводы, но и представляет ряд практических рекомендаций для усовершенствования законодательства и правоприменительной практики Республики Армения, исходя из императива гарантии права человека на конституционного правосудие.

NAREK KOCHARYAN

CONSTITUTIONAL AND LEGAL GUARANTEES FOR PROMOTION AND PROTECTION OF HUMAN RIGHTS IN THE REPUBLIC OF ARMENIA (IN THE CONTEXT OF REALIZATION OF HUMAN RIGHT FOR CONSTITUTIONAL JUSTICE)

SUMMARY

This dissertation is devoted to the study of effective protection of violated human rights and fundamental freedoms through the exercise of the human right to constitutional justice and guarantees for precedence and viability of the Constitution and the rule of law.

The distinctive features of perception and manifestation of rights in different historical periods have been analyzed taking into account their structural integrity. Based on such analysis, the content and interpretation of the concepts of a “right” and the “principle of the rule of law” have been disclosed, along with the imperative of humanity to guarantee the rule of law, as well as the historical background of all the prerequisites, the combination of which creates a stable foundation for the rule of law. The essence of the concept of a “legitimate law” has been revealed while distinguishing among a variety of functions of the three key principles stemming from the concept of a legitimate law, i.e. the principle of precedence of rights, the principle of formal equality and the principle of the rule of law.

Noting the invaluable role of the rule of law in the exercise of the natural human right to a dignified existence, the author has also emphasized the importance of increasing the operational efficiency of specialized institutions engaged in constitutional review as, on the one hand, the latter are authorized to protect human and civil rights and freedoms stipulated in the Constitution, on the other hand, they are able to ensure the legal and constitutional nature of public relations, creating real conditions for guaranteeing the rule of law.

A comprehensive analysis of current international trends and developments of constitutional review in the protection of human rights and the issues of harmonizing them with the constitutional justice system of the Republic of Armenia have been presented in the dissertation. The author has disclosed the essence of the concept of an "individual complaint system” and discussed its invaluable and irreplaceable role in promotion and protection of human rights, precedence and

viability of the Constitution, establishment of constitutionality of the country and guaranteeing of the rule of law. The author has further justified the irrefutable necessity of a full implementation of anindividual complaint system in regard to the realities presented above. In the dissertation, the author has also noted a significant need to empower the Constitutional Court to restore violated rights and appeal for equal compensation, while proposing to define and establish mechanisms for moral damage compensation by law in order to enable the Constitutional Court to determine an equivalent to the amount of compensation established by a ruling of the Strasbourg Court. To ensure a full and complete implementation of resolutions of the Constitutional Court, the author has clarified the legal meaning of the term "Implementation of a Decision of the Constitutional Court", distinguishing between mechanisms for legislative recognition of "active" and "passive" obligations emanating from this concept.

Possibilities for the exercise of indirect forms of constitutional protection of human rights have been studied, touching on the procedure for preliminary inquiries to the Constitutional Court by courts of general jurisdiction and capabilities for its implementation, the issues of clear distinction between the powers of the Constitutional Court and those of the courts of general jurisdiction, in addition to the restrictions of discretion of the courts of general jurisdiction. The advantages and disadvantages of the exercise of human right to constitutional justice through other public authorities have been disclosed as well, while presenting new approaches for ensuring of active cooperation between public authorities and the Constitutional Court. The studies the author has conducted indicate that individual complaints comprise about 84% of the petitions on the constitutionality of normative acts that have been filed to and examined by the RA Constitutional Court since 2005, while all the other entities eligible to go to the Constitutional Court have filed just 16% of above mentioned petitions. Based on this statistic, the author concludes that, despitea wide range of entities who have the right by the RA Constitution to apply to the Constitutional Court to judge the constitutionality of normative legal acts, it is the individuals who play a fundamental and primary role in establishment of the constitutionality and guaranteeing of the rule of law in Armenia.

After a careful study of these issues in the dissertation, the Author has presented not only theoretical findings, but also a number of practical recommendations for improving the legislation and legal practice of the Republic of Armenia on the grounds of the imperative for guaranteeing human right to constitutional justice.